ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՋԱԲԵԿՅԱՆ՝ ԳԻՏՆԱԿԱՆ, ՄԱՐԴ - ՔԱՂԱՔԱՑԻ

Հուլիսի 3-ին՝ կյանքի 83 տարեկան հասակում, կյանքից հեռացավ ականավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Եղիշի Խոջաբեկյանը:

Վ. Խոջաբեկյանը ծնվել է 1929 թ. մարտի 2-ին ՀՀ Վարդենիսի շրջանի Խաչաղբյուր գյուղում: Գերազանցության դիպլոմով ԵՊՀ-ն ավարտելուց հետո անցել է աշխատանքի Հայպետհրատում, իսկ 1960 թ. մինչև մահը աշխատել ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող, գիտական քարտուղար, բաժնի վարիչ, փոխտնօրեն, տնօրեն, ապա՝ տնօրենի խորհրդական:

Վ. Ե. Խոջաբեկյանը հեղինակել է ավելի քան 500 գիտական աշխատանքներ, որոնցից մեկ և կես տասնյակը մենագրություններ են: Դրանք հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն լույս են տեսել Երևանում, Մոսկվայում, Կիևում, Բեռլինում, Նյու Յորքում, Փարիզում, Աթենքում և այլուր՝ նրան բերելով լայն ճանաչում:

Վ. Խոջաբեկյանի առաջին ուսումնասիրությունները նվիրված են աշխատանքի արտադրողականության տեսական հարցերին, ներարտադրական ռեզերվների բացահայտմանը և գնահատմանը, դրանց դասակարգմանը, արդյունաբերական ձեռնարկությունների ռեզերվների ի հայտ բերելուն և օգտագործմանը, իսկ 1960-ական թվականներից սկսած՝ ժողովրդագրության զարգացման օրինաչափությունների դրսևորման ուղղությունների, միտումների և բնակչության աճի գործոնների դերի բացահայտմանն ու գնահատմանը: Նրա գրչին են պատկանում այնպիսի մենագրություններ, ինչպիսիք են «Բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966–1985 թթ. Հայկական ԽՍՀ-ում», «Աղետ և մտահոգություն» (որում բացահայտվել են երկրաշարժի ժողովրդագրական հետևանքները, դրա ազդեցությունն աղետի գոտում, հատկապես նրա էպիկենտրոնում), «Արցախը փորձության ժամին» (նվիրված է Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում իրականացվող հայաթափության քաղաքականության մերկացմանը), «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX–XX դարերում, XXI դարի շեմին» (նվիրված է ժողովրդագրության, պատմության և ժողովրդական տնտեսության հիմնախնդիրների համապարփակ քննարկմանը: Այն վերաբերում է բնակչության աճի և տեղաշարժերի, էթնոժողովրդագրա-

կան գործընթացների առանձնահատկությունների և օրինաչափությունների բացահայտմանը) և այլն:

Վ. Խոջաբեկյանն արդյունավետ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար պարգևատրվել է ՀՀ Մովսես Խորենացու մեդալով, բազմաթիվ պատվոգրերով: 1999 թ. Ամերիկյան կենսագրական ինստիտուտի կողմից նա արժանացել է «1998 թ. Տարվա մարդ» կոչմանը:

Մեծ է Վ. Խոջաբեկյանի վաստակը նաև բարձրորակ տնտեսագետների, այդ թվում գիտնականների պատրաստման գործում: Մոտ կես դար դասախոսել է հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նրա գիտական ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել բազում ասպիրանտներ ու գիտաշխատողներ:

Երկար տարիներ Վ. Խոջաբեկյանը եղել է ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալը, բաժանմունքի բյուրոյի անդամ, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտական, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ատենախոսության պաշտպանության մասնագիտական խորհուրդների նախագահ:

Վ. Խոջաբեկյանն իր ողջ գործունեության ընթացքում աչքի է ընկել սկզբունքայնությամբ, գիտական բարեխղճությամբ, աշխատասիրությամբ ու պարտաճանաչությամբ:

Տաղանդավոր գիտնականի, գիտության կազմակերպչի, հայ ժողովրդի արժանավոր զավակի՝ Վլադիմիր Խոջաբեկյանի պայծառ կերպարը վառ կմնա նրան ճանաչողների, հարազատների, բարեկամների հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական
գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ